ՄՀՄԻ անդամ պետությունների կառավարությունների լիազոր ներկայացուցիչների հանձնաժողովի նստաշրջան Դուբնայում
(2010 **թ. մարտի** 25-26)

2010 թվականի մարտի 25-26-ը Դուբնայում կայացավ Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի (ՄՀՄԻ) անդամ պետությունների կառավարությունների լիազոր ներկայացուցիչների հանձնաժողովի հերթական նստաշրջանը:

Նստաշրջանին մասնակցելու նպատակով Դուբնա էին մեկնել ՄՀՄԻ-ում ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցիչ, ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ Ս. Հարությունյանը եւ կոմիտեի աշխատակազմի ղեկավար Կ. Հայրապետյանը:

Նիստերում քննարկվող հիմնական թեմաներն էին՝ ինստիտուտի 2003-2009 թթ. գործունեությունը, իրականացված կարեւորագույն ծրագրերի արդյունքները, ինստիտուտի ֆինանսական կոմիտեի նիստի արդյունքները, ինչպես նաեւ՝ 2010-16 թթ. զարգացման հեռանկարները: Օրակարգում էր նաեւ ՄՀՄԻ տնօրենի ընտրությունը. բաց քվեարկությամբ միաձայն ինստիտուտի տնօրեն ընտրվեց ՌԴ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Ա. Սիսակյանը:

Այցելության ընթացքում կոմիտեի նախագահը հանդիպել է նաեւ Մոսկվայի հայ գործարարների հետ: Հանդիպման ժամանակ պարոն Հարությունյանը ներկայացրել է Հայաստանում գիտության զարգացման եւ հնարավոր համագործակցության հեռանկարները:

Տեղեկատվության եւ հասարակայնության
հետ կապերի բաժին

PDF created with pdfFactory trial version www.pdffactory.com